ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի փոքրիկնե՛ր, սրտանց շնորհավորում եմ ձեզ այս գեղեցիկ տոնի՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ: Ցանկանում եմ, որ միշտ լինեք առողջ ու երջանիկ և ունենաք խաղաղ, անհոգ և բարի մանկություն:

Սիրելի՛ երեխաներ, այսօր մենք՝ մեր ՀՀ կառավարության հետ միասին ձեռք ձեռքի տված փորձում ենք անել ամեն հնարավորը՝ ձեր իրավունքները պաշտպանելու, առողջ, կրթված և ազատ սերունդ ունենալու համար, քանզի դուք եք մեր հաջողությունների և ձեռքբերումների անմիջական շարունակողը և մեր երկրի գեղեցիկ ապագան: Մեզանից յուրաքանչյուրի պարտքն ու առաքելությունն է՝ սատար կանգնելու ձեր երազանքների ու նպատակների իրականացմանը:

Սիրելի՛ փոքրիկներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ ամենահեքիաթային և ամենագունավոր տոնի առթիվ՝ մաղթելով, որ խաղաղությունն ու երջանկությունը լինեն ձեր մշտական ուղեկիցը, շրջապատված լինեք անհուն սիրով և հոգատարությամբ:

Բարի և հրաշքներով լի օր եմ մաղթում բոլորիդ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ